ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
գ. Սայաթ-Նովա, 0236-6-06-90, Sayat-NovaV@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N20

11.09.2014թվական

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետով ավագանին

ՈՐՈՇԵՑ

Տալ հավանություն համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման 2015-2018թթ. քառամյա ծրագրին

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ՝	Դեմ՝	Ձեռնպահ՝
Այվազյան Արարատ			
Այվազյան Ռաֆայել			
Եփրեմյան Արման			
Զարգարյան Կամո			
Պետրոսյան Վազգեն			
Խաչարյան Վլադիմիր			
Սաֆարյան Անդրոնիկ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆՀԱՏՈՒՄ

- ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Սայաթ-Նովա գյուղը մարզկենտրոնից գտնվում է 22 կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Ներքին Նեջռլու անվանումը: Սայաթ -Նովա է վերանվանվել 1978թ-ին:

Գյուղն ընկած է Հրազդան գետի ձախ ափին, Արարատյան դաշտում: Ծովի մակարդակից ունի 827մ բարձրություն: Կլիման չոր խիստ ցամաքային է: Ձմեռները սկսվում են դեկտեմբերի կեսերին, հունվարյան միջին ջերմաստիճանը տատանվում է -3-ից -5: Ամառը տևական է՝ մայիսից մինչև հոկտեմբեր, օդի միջին ամսական ջերմաստիճանը հասնում է 24-ից 26, իսկ առավելագույը՝ 42: Հաճախ լինում են խորշակներ, որոնք զգալի վնաս են հասցնում գյուղատնտեսությանը: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 250-300մմ է:

Բնական լանդշաֆտները կիսանապատներ են, որոնք ոռոգման ընթացքում վեր են ածվել կուլտուրոռոգելի լանդշաֆտի: Ագրոկլիմայական տեսակետից համայնքն ընկած է բացարձակ ոռոգման գոտում:

Մինչև 1950 թ. գյուղը բնակեցված է եղել ադրբեջանցիներով և քրդերով: Առաջին հայ բնակիչները գյուղում սկսել են բնակվել 1950թ-ից, որոնք տեղափոխվել են Գավառից /Կամո/ և Շամշադինից: 1950թ-ին գյուղում բնակչությունը կազմել է 1164, 1979թ-ին 1810 մարդ: 1988-1989 թթ. Հայ-Ադրբեջանական հարաբերությունների վատթարացման արդյունքում ազգային կազմը դարձել է միատար և Ադրբեջանից գաղթել են 1720 հայեր:

Ըստ 2010թ-ի ազգային վիճակագրական ծառայության տվյալների համայնքի բնակչությունը կազմում է 2119 մարդ, որից 48% տղամարդիկ են, իսկ կանայք 52%: Մինչաշխատունակ տարիքի բնակչությունը կազմում է 22% աշխատունակ տարիքի ներկայացուցիչները՝ 60%, հետաշխատունակները՝ 18%:

Գյուղն ունի 677 տնտեսություն: Ունի դպրոց, գրադարան, բուժկետ, կապի հանգույց, մշակույթի տուն:

Համայնքի տնտեսության մասնագիտացման ճյուղը գյուղատնտեսությունն է , համախառն բերքի մեծ մասը տալիս է բուսաբուծությունը: Գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են շուրջ 397 հա: Համայնքի հողերի հիմնական մասը օգտագործվում է, որպես վարելահողեր՝ զբաղեցնելով մոտ 273հա: Զբաղվում են դաշտավարությամբ, բանջարաբուծությամբ: Մշակում են ջերմասեր բանջարաբոստանային, հացահատիկային, կերային կուլտուրաներ: Համեմատաբար ընդարձակ մակերես է զբաղեցնում արոտավայրերը՝ շուրջ 62հա: Կան խոտհարքներ: Զբաղվում են կաթնամսատու անասնապահությամբ, թռչնաբուծությամբ: Արդյունաբերություն չունի: Համայնքի հիմնախնդիրների մեջ կարեվորվում է խմելու և ոռոգման ջրի հիմնախնդիրները, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, նոր մանկապարտեզի շինարարությունը ավարտին հասցնելը, հանդիսությունների սրահի կառուցումը:

- ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համայնքը ունի 677 տնային տնտեսություններ:
1988 թ-ից արմատապես փոխվել է համայնքի ժողովրդագրական պատկերը:
Մինչև այդ գյուղը բնակեցված էր ադրբեջանցիներով: Այժմ բնակչության

մեծ մասը կազմում է Ադրբեջանից բռնագաղթվածները, մնացածը Հանրապետության այլ բնակավայրերից՝ հատկապես Գավառից և Շամշադինից, վերաբնակեցվածները:Բնակչությունը 01.01.2014թ-ի դրությամբ կազմում է 2427 մարդ , որից 1096 տղամարդ, 1331 կին:
Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է՝

1. Մինչև 1-5 տարեկան - 144
2. Մինչև 7 տարեկան - 89
3. Մինչև 17 տարեկան - 260
4. 17-63 տարեկան - 1376
5. 63 տարեկան և բարձր - 314
6. Կենսաթոշակառուներ - 377
7. Հաշմանդամներ - 65
8. Նպաստառու ծխեր - 71
9. Աշխատունակներ - 1250

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Գյուղը կառավարվում է համայնքի ղեկավարի կողմից ,որն ընտրվում է 4 տարին մեկ անգամ :
Գյուղապետը ստեղծել է աշխատակազմ հետևյալ կառուցվածքով՝

Հայեցողական պաշտոններ
- Համայնքի ղեկավարի տեղակալ 1 դրույք

Համայնքային ծառայության պաշտոններ
- Աշխատակազմի քարտուղար 1.2-1 1դրույք
- Աշխատակազմի գլխավոր մասնագետ 2.3-1 1 դրույք
- Աշխատակազմի առաջատար մասնագետ 3.1-1 1 դրույք
- Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ 3.2-1 1 դրույք
- Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ 3.3-1 1 դրույք

Պայմանագրային աշխատողներ
- Ակումբավար 1 դրույք
- Գրադարանավարուհի 1 դրույք

Տեխսպասարկման անձնակազմ
- Պահակ 1 դրույք
- Հավաքարար 1 դրույք

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 14.03.1997 թ-ի թիվ 51 որոշմամբ

- Վարչական շենք 1 միավոր
- Բուժամբուլատորիա 1 միավոր
- Գազատար կառույց 7.1 կմ
- Ոռոգման ցանց 1.6 կմ.
- Գյուղ.տեխնիկա 1 տրակտոր կցասայլով
- Մարդատար ավտոմեքենա 1 ՎԱԶ 1183
- Ակումբի շենք 1 միավոր
- Շատրվաններ /արտեզյան/ 13 միավոր

Համայնքի գույքը ֆիզիկական մեծ մաշվածություն ունի :
Ճանապարհային ցանցը վերանորոգման կարիք ունի:
Անհրաժեշտ է վերանորոգել ճանապարհները և փողոցները:
Վերանորոգել փողոցներ լուսավորությունը: Կառուցել ոռոգման ցանց:
Հիմնանորոգման կարիք ունի մշակույթի տունը:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Աղբահանությունը կատարվում է գյուղապետարանի միջոցով , պարբերաբար:
Գարնան ամիսներին համայնքը ենթարկվում է հեղեղման և տարածքի որոշ մասեր ջրածածք է լինում:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում բազմաբնակարան շենք չկա
Մասնավոր բնակարաններ 385
Կիսակառույցներ 32
Բնակարանները հիմնականում կառուցվել են 1960-90 թթ-ին , մեկ հարկից են գերխոնավության հետևանքով մեծ մասը խարխլվել և կիսավթարային են:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Ընթացքի մեջ է համայնքի պարզեցված գլխավոր հատակագծի ձեռք բերման աշխատանքները: Նախատեսվում է այն ավարտին հասցնել մինչև 2015թ-ի հունիս ամիսը:

2015 թ-ի համայնքի բյուջեում նախատեսել համապատասխան գումար, սեյսմիկ քարտեզագրման համար անհրաժեշտ միջոցառումներ իրականացնելու:

ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

1. գյուղտնտեսական մեքենաների և գործիքների քանակը ,հատ

ա/ մասնավոր սեփականություն

- անիվավոր տրակտոր 4 հատ

- տրակտորային կցասայլեր 3 հատ
- բեռնատար ավտոմեքենա 8 հատ
- շարքացան 2 հատ
- կուլտիվատոր 3 հատ

2. Համայնքի հողօգտագործում

- Ընդամենը 616.84 հա
- Գյուղնշանակության 384.9 հա
  այդ թվում՝
  ա/ վարելահող 263.88 հա
  գ/ արոտ 59.21 հա
  դ/ այլ հողատեսքեր 61.79 հա
- Բնակավայրի հողեր 133.43 հա
- Արդյունաբ.ընդերք.օգտ. 32.10 հա
- էներգետիկայի,տրանսպորտի նշն հողեր 18.06 հա
- Հատուկ պահպանվող տարածքներ 3.67 հա
- Հատուկ նշանակության 2.89 հա
- Ջրային ֆոնդի հողեր 41.82 հա

Հողի սեփականության ձևերը

- ՀՀ քաղաքացիների 337.04 հա
- ՀՀ իրավաբանական անձանց 27.33 հա
- Համայնքային սեփականություն 214.13 հա
- Պետական սեփականություն 38.34 հա

3. Գյուղ.մթերքների արտադրությունը

- Ցորեն 2450 g.
- Բանջարեղեն 30 000 g.
- Կարտոֆիլ 2610 g.

4. Անասնագլխաքանակը , հատ
ա/ խոշոր եղջերավոր անասուններ 249 գլուխ
այդ թվում կովեր 95 գլուխ
բ/ մանր եղջերավոր անասուններ 67 գլուխ
այդ թվում մաքի 27 գլուխ
գ/ խոզեր 164 գլուխ
այդ թվում մայրեր 49 գլուխ
դ/ թռչուններ 2465 թև
այդ թվում հավեր 2260 թև

1.ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

- Համայնքը դարձնել բարեկարգ
- Բարելավել բնակչության սոցիալ-կենցաղային պայմանները
- Համայնքը դարձնել տարածաշրջանի խոշոր գյուղատնտեսական կենտրոն՝ բանջարեղենի և մսատու անասունների և թռչունների արտադրության ոլորտում

2. ԱՌԱՋԻԿԱ 4 ՏԱՐԻՆԵՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1. Կառուցել հասարակական կառույց՝ հանդիսությունների սրահ
2. Համայնքում խմելու ջրագծի անցկացում
3. Պարզեցված գլխավոր հատակագծի ձեռք բերում
4. Գյուղամիջյան կենտրոնական փողոցների լուսավորում
5. Դպրոցի վերանորագում
6. Մշակույթի տան կապիտալ վերանորոգում

ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ ԵՎ ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

ԾՐԱԳԻՐ – 1

Կառուցել հասարակական կառույց՝ հանդիսությունների սրահ

Ներածություն

Համայնքը չունի հասարակական կառույց , բնակչության կենցաղային հարցերը լուծելու համար, որի համար էլ անհրաժեշտ է սկսել հանդիսությունների սրահի շինարարությունը:

ՆՊԱՏԱԿ

Շենքով ապահովել համայնքի բնակչությանը արարողությունները պատշաճ մակարդակով անցկացնելու համար:

ԽՆԴԻՐ 1

Հասարակական կառույցի՝ հանդիսությունների սրահի շինարարությունը ավարտին հասցնելու համար նախատեսել համայնքի 2015-2018 թթ. ֆոնդային բյուջեով 4000.0 հազ.դրամ :

Պատասխանատու գյուղապետարան

ԾՐԱԳԻՐ - 2

Համայնքում խմելու ջրագծի անցկացում

Ներածություն

Գյուղի բնակչությունը չունի խմելու ջուր ,օգտվում է արտեզյան ջրերից :

ՆՊԱՏԱԿ

Ապահովել բնակչությանը խմելու ջրով:

ԽՆԴԻՐ - 2

Խմելու ջրագիծ անցկացնելու համար պահանջվում է 250 000.0 հազ.դր.:
2015-18 թթ. ֆոնդային բյուջեով նախատեսել 10 000.0 հազ դր.:
Պակաս 240 000.0 հազ.դր. հայթայթելու համար դիմել « Վերջին Օրերի Սրբեր » կազմակերպությանը :

Պատասխանատու համայնքի ղեկավար

ԾՐԱԳԻՐ – 3

Գյուղամիջյան կենտրոնական փողոցների լուսավորում

Ներածություն

Անհրաժեշտ է գյուղի փողոցները ապահովել գիշերային լուսավորվածությամբ:

ՆՊԱՏԱԿ

Ապահովել գյուղի կենտրոնական փողոցները գիշերային լուսավորվածությամբ:

ԽՆԴԻՐ – 3

2011-14 թթ. ֆոնդային բյուջեով նախատեսել 4000.0 հազ.դր էլեկտրասյուներ և լարեր ձեռք բերելու համար:

Պատասխանատու համայնքի ղեկավար

ԾՐԱԳԻՐ – 4

Պարզեցված գլխավոր հատակագծի ձեռք բերում

Ներածություն

Համայնքը չունի գլխավոր հատակագիծ:

ՆՊԱՏԱԿ

Հավելված
Սայաթ-Նովա գյուղի ավագանու
10.09.2014թ-ի թիվ 20 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015-2018 թթ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Կազմեց՝ համայնքի ղեկավար

Ռազմիկ Ալավերդյանը

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ - 2014

Համայնքին ապահովել գլխավոր հատակագծով:

ԽՆԴԻՐ – 4
Պարզեցված գլխավոր հատակագծի ձեռք բերամ համար պահանջվում է 4500.0 հազ.դր, 2015-18 թթ. ֆոնդային բյուջեով նախատեսել 4500.0 հազ.դրամ:

Պատասխանատու համայնքի ղեկավար

ԾՐԱԳԻՐ - 5
Համայնքի մշակույթի տան վերանորոգում
Ներածություն
Համայնքու առկա մշակույթի տունը գտնվում է անմխիթար վիճակում :

ՆՊԱՏԱԿ
Համայքի մշակույթի տունը վերանորոգել, բնակչության ազատ ժամանցը պատշաճ կազմակերպելու համար :

ԽՆԴԻՐ - 5
Մշակույթի տան վերանորոգման համար պահանջվում է 30 000.0 հազ.դր.:
2015-18 թթ. ֆոնդային բյուջեով նախատեսել 3 000.0 հազ դր.:
Պակաս 27 000.0 հազ.դր. հայթայթելու համար դիմել դոնոր կազմակերպություններին, ինչպես նաև համայնքի բնակչության օգնությանը:

Պատասխանատու համայնքի ղեկավար

ԾՐԱԳԻՐ - 6
Համայնքի միջնակարգ դպրոցի վերանորոգում
Ներածություն
Համայնքի միջնակարգ դպրոցը գտնվում է անմխիթար վիճակում հատկապես լուսամուտների և ջեռուցման հառցում :

ՆՊԱՏԱԿ
Համայքի միջնակարգ դպրոցի պատուհանների փոխում և ջեռուցման անցկացում:

ԽՆԴԻՐ - 6
Համայքի միջնակարգ դպրոցի համար պահանջվում է 50 000.0 հազ.դր.:
2015-18 թթ. ֆոնդային բյուջեով նախատեսել 5 000.0 հազ դր.:
Պակաս 45 000.0 հազ.դր. հայթայթելու համար դիմել դոնոր կազմակերպություններին, ինչպես նաև համայնքի բնակչության օնությանը:

Պատասխանատու համայնքի ղեկավար